ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 16 » հունիս 2021թ. N 77 Ա

ԱՅԼ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 786-Ն որոշումը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի հունիսի 9-ի թիվ 74-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կազմած եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 786-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզին տրամադրվող «Այլ կապիտալ դրամաշնորհներ համայնքներին» հոդվածից 85 000 000 (ութսունհինգ միլիոն) ՀՀ դրամ այլ կապիտալ դրամաշնորհից 60 800 000 (վաթսուն միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը, ըստ մարզի համայնքներում աշխատանքային խմբի կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա մարզում առաջնահերթ հիմնախնդիրները բացահայտելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված հիմնավորումների, առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման՝ հակակարկտային կայաններ տեղադրելու նպատակով հատկացնել մարզի թվով 8 (ութ) համայնքի՝ համաձայն հավելվածի:

2. Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությանը՝ կազմակերպել այլ կապիտալ դրամաշնորհի պայմանագիր կնքելու աշխատանքները:

3. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը, ըստ կնքված պայմանագրերի, ապահովել որոշման պահանջների կատարումը:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

16.06.2021

X

ՆԱՆԵ ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2021թ. հունիսի 16-ի թիվ 77-Ա որոշման

N	Դրամաշնորհ ստացող համայնքեր	Դրամաշնորհի տրամադրման նպատակը	Հակակարկտային կայանի քանակ	Գումարը (հազ. դրամներով)
1.	Եղեգնաձոր	Հակակարկտային կայանի տեղադրում	3	5.700.0
2.	Վայք	Հակակարկտային կայանի տեղադրում	5	9.500.0
3.	Ջերմուկ	Հակակարկտային կայանի տեղադրում	4	7.600.0
4.	Արենի	Հակակարկտային կայանի տեղադրում	3	5.700.0
5.	Գլաձոր	Հակակարկտային կայանի տեղադրում	3	5.700.0
6.	Եղեգիս	Հակակարկտային կայանի տեղադրում	7	13.300.0
7.	Զառիթափ	Հակակարկտային կայանի տեղադրում	5	9.500.0
8.	Մալիշկա	Հակակարկտային կայանի տեղադրում	2	3.800.0
	Ընդամենը		32	60.800.0